

Ռուզաննա Արիստակեսյան
Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտ
ORCID ID 0000-0002-2748-0249
aristakesyanr@yahoo.com
DOI: 10.54503/1829-0116-2023.2-80

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՉՅԱՆ. «ԽՈՐՀՈՒԴՆԵՐ ՄԿՄՆԱԿ ԳՐՈՂԻՆ»

Բանալի բառեր – Դ. Դեմիրճյանի երկերի ժողովածու, «Ավանգարդ» թերթ, (Օչերկ, պատկեր, պատմվածք), (Լեզու և ոճ), (Բովանդակություն, պլան, մշակում), սկսնակ գրողներ, Եդ. Չարենց. «Մեր գրական լեզվի զարգացման տենդենցները և Դ. Դեմիրճյանի լեզուն»:

Հայտնի է, որ Դ. Դեմիրճյանը գրական-գեղարվեստական գործունեությանը զուգահեռ գրել է նաև գրականագիտական ուսումնասիրություններ, քննադատական և հրապարակախոսական հոդվածներ:

Գրողի ուշադրության կենտրոնում էին նաև երիտասարդ ստեղծագործողներին առնչվող խնդիրները: «Մի քանի խոսք մեր սկսնակ գրողներին», «Երիտասարդ գրողներին» հոդվածներում, «Երիտասարդ արձակագիրներ» զեկուցման մեջ Դեմիրճյանն անդրադառնում է գեղարվեստական վարպետության խնդիրներին, կարևորում երիտասարդ գրողների կենսական և գրական փորձառությունը, կյանքին և իրական խնդիրներին կապվածությունը, ազգային և համաշխարհային գրական փորձի իմացությունը, ընդհանուր զարգացածությունն ու ինքնուրույնությունը:

Ահա այս խնդիրների շրջանակում է նաև մեր կողմից ներկայացվող «Խորհուրդներ սկսնակ գրողին» հոդվածը (Դեմիրճյանի երկերի ժողովածուի 12-րդ հատորում այն սխալմամբ վերնագրված է «Խորհուրդներ սկսնակ գրողներին»): Այն տպագրվել է «Ավանգարդ» թերթի 1930 թվականի հունիսի 1-ի (թիվ 123), 8-ի (թիվ 129), 22-ի (թիվ 141) համարներում:

Դեմիրճյանի երկերի ժողովածուի 12-րդ հատորում տեղ են գտել եռամաս այս հոդվածի միայն առաջին (Օչերկ, պատկեր, պատմվածք) և երրորդ հատվածները (Բովանդակություն, պլան, մշակում): Բացակայում է երկրորդը (Լեզու և ոճ), որը վրիպել է ուսումնասիրողների աչքից: Մինչդեռ այն բավականին հետաքրքրական հատված է թե՛ գրողի ժառանգության բաց թողած էջերի լրացման, թե՛ լեզվի մասին նրա կարևոր դիտարկումների ամբողջացման տեսանկյունից: Դրանում հեղինակը մեկ անգամ ևս ներկայացնում է իր մոտեցումները գրական լեզվի, դրա կարևոր հատկանիշների (պարզություն, պատկերավորություն, հուզականություն), ոճի, բառի և պատկերի մասին:

Ruzanna Aristakesya
Doctor of Philology
Institute of Literature after M. Abeghyan NAS RA
ORCID ID 0000-0002-2748-0249
aristakesyanr@yahoo.com

DERENIK DEMIRCHYAN: "ADVICE TO THE BEGINNER WRITER"

Keywords - D. Demirchyan's collection of works, "Avangard" newspaper, (Essay, image, story), (Language and style), (Content, plan, development), beginner writers, Yeghishe Charents. "Development tendencies of our literary language and D. Demirchyan's language"

It is known that parallel to literary and artistic activity D. Demirchyan also wrote literary studies, critical and publicizing articles. His analyses of "Sasuntsi David" epos, national theatre and in general dramaturgy, literary culture, literary language development trends and different problems regarding genres and creativity are remarkable. In the series, there are also his reactions, speeches and reports on different occasions.

His articles on Armenian, as well as Russian classic and modern authors (Abovyan, Nalbandyan, Aghayan, Tumanyan, Isahakyan, Shirvanzade, Pushkin, Gogol, Saltykov - Shchedrin, Chekhov, Gorky, Sholokhov and others) are particularly interesting. They stand out for their broad knowledge of the history of literature, in-depth analyzes of aesthetic-creative questions, and original and subtle observations about the authors.

The focus of the writer's attention was also the problems related to young creators. In the articles "A Few Words to Our Beginner Writers", "Young Writers", and the report "Young Writers", Demirchyan addresses the problems of artistic mastery, highlights the life and literary experience of young writers, their attachment to life and real problems, knowledge of national and world literary experience, general development and independence.

Here, the article "Advice to the Beginner Writer" presented by us is also within the framework of these problems (in the 12th volume of the collection of Demirchyan's works, it's entitled as "Advice to the Beginner Writers" by mistake). It was published in "Avangard" newspaper on June 1 (No. 123), 8 (No. 129), 22 (No. 141) issues of 1930. The 12th volume of Demirchyan's collection of works contains only the first and third parts of this three-part article: (Essay, image, story) and (Content, plan, development). The second (Language and style) is missing, which escaped the attention of researchers. Still, it is quite an interesting passage both in terms of completing the missing pages of the writer's legacy and in the context of his important observations about language. In this work the author once again presents his approaches to literary language, its important features (simplicity, imagery, emotionality), style, word and image.

Рузанна Аристакесян

Доктор филологических наук

Институт литературы имени М. Абегяна НАН РА

ORCID ID 0000-0002-2748-0249

aristakesyanr@yahoo.com

ДЕРЕНИК ДЕМИРЧЯН «СОВЕТЫ НАЧИНАЮЩЕМУ ПИСАТЕЛЮ»

Ключевые слова - Сборник сочинений Д. Демирчяна, газета «Авангард» (Очерк, образ, рассказ), (Язык и стиль), (Содержание, план, разработка), начинающие писатели, Е. Чаренц «Тенденции развития нашего литературного языка и язык Д. Демирчяна»

Известно, что наряду с литературно-художественной деятельностью Д. Демирчян писал также литературоведческие исследования, критические и публицистические статьи. Примечательны его анализы касательно эпоса «Давид Сасунский», национального театра и драматургии в целом, литературной культуры, тенденций развития литературного языка, жанров и различных творческих проблем. В этом ряду также примечательны его обращения-отклики, выступления и доклады по различным поводам.

Отдельный интерес представляют его статьи как об армянских, так и о русских классических и современных авторах (Абовяне, Налбандяне, Агаяне, Туманяне, Исаакяне, Ширванзаде, Пушкине, Гоголе, Салтыкове-Щедрине, Чехове, Горьком, Шолохове и др.). Труды Демирчяна отличаются широким знанием истории литературы, глубоким анализом эстетически-творческих вопросов, самобытными и тонкими наблюдениями об авторах.

В центре внимания писателя были также проблемы, связанные с молодыми авторами.

В своих статьях «Несколько слов нашим начинающим писателям», «Молодым писателям», в докладе «Молодые прозаики» Демирчян обращается к проблемам художественного мастерства, придает важность жизненному и литературному опыту молодых писателей, их привязанности к жизни и реальным проблемам, знанию национального и мирового литературного опыта, общему развитию и самостоятельности.

Данная статья выявляет особенности труда «Советы начинающему писателю» (в 12-ом томе сборника сочинений Демирчяна ошибочно озаглавлена «Советы начинающим писателям»). Она была опубликована в номерах газеты «Авангард» от 1 июня 1930 года (№123), от 8 июня (№129), 22 июня (№141). В 12-м томе сборника сочинений Демирчяна нашли место только первый и третий разделы этой статьи: (Очерк, образ, рассказ) и (Содержание, план, разработка). Отсутствует второй раздел (Язык и стиль), который ускользнул от внимания исследователей. Между тем, это довольно интересный отрывок как в контексте заполнения пропущенных страниц наследия писателя, так и в контексте его важных наблюдений о языке. В нем автор еще раз излагает свои подходы к литературному языку, его важным характеристикам (ясности, образности, эмоциональности), стилю, слову и образу.

Հայտնի է, որ Դեմիրճյանը գրական-գեղարվեստական գործունեությանը զուգահեռ գրել է նաև գրականագիտական ուսումնասիրություններ, քննադատական և հրապարակախոսական հոդվածներ: Ուշագրավ են նրա վերլուծությունները «Սասունցի Դավիթ» էպոսի, ազգային թատրոնի և ընդհանրապես դրամատուրգիայի, գրական կուլտուրայի, գրական լեզվի զարգացման միտումների, ժանրերի և ստեղծագործական տարբեր խնդիրների վերաբերյալ: Այդ շարքում են նաև տարբեր առիթներով նրա արձագանք-անդրադարձները, ելույթներն ու զեկուցումները: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նրա հոդվածները ինչպես հայ, այնպես էլ ռուս դասական և ժամանակակից հեղինակների մասին (Աբովյան, Նալբանդյան, Աղայան, Թումանյան, Իսահակյան, Շիրվանզադե, Պուշկին, Գոգոլ, Սալտիկով-Շչեդրին, Չեխով, Գորկի, Շոլոխով և ուրիշներ): Դրանք աչքի են ընկնում գրականության պատմության լայն իմացությամբ, գեղագիտական-ստեղծագործական հարցադրումների խորքային վերլուծություններով, հեղինակների մասին ինքնատիպ և նուրբ դիտարկումներով:

Դեմիրճյանի տեսական-քննադատական ժառանգության մաս են կազմում նաև արվեստի այլ բնագավառներին՝ երաժշտությանը, ճարտարապետությանն առնչվող ընթացիկ և պատմատեսական ուշագրավ վերլուծություններ:

Գրողի ուշադրության կենտրոնում էին նաև երիտասարդ ստեղծագործողներին առնչվող խնդիրները: «Մի քանի խոսք մեր սկսնակ գրողներին», «Երիտասարդ գրողներին» հոդվածներում, «Երիտասարդ արձակագիրներ» զեկուցման մեջ Դեմիրճյանն անդրադարձել է գեղարվեստական վարպետության խնդիրներին, կարևորել երիտասարդ գրողների կենսական և գրական փորձառությունը, կյանքին և իրական խնդիրներին կապվածությունը, ազգային և համաշխարհային գրական փորձի իմացությունը, ընդհանուր զարգացածությունն ու ինքնու-րույնությունը: «Երիտասարդ գրողը,- գրում է Դեմիրճյանը,- նման է մատղաշ տունկի, պետք է զգույշ և խնամքով վերաբերվել նրա հետ, այլապես նա կարող է հենց սկզբից սխալ ուղղությամբ գնալ» (տե՛ս «Մի քանի խոսք մեր սկսնակ գրողներին», Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 13, էջ 56): Այս թեմային

է վերաբերում նաև Դեմիրճյանի «Երիտասարդ և սկսնակ արձակագիրների ստեղծագործությունը» վերտառությամբ զեկուցումը երիտասարդ և սկսնակ գրողների հանրապետական խորհրդակցությանը, որը բացվել է 1950 թ. նոյեմբերի 2-ին Երևանի գրողների միության դահլիճում: Դեմիրճյանը զեկուցումով հանդես է եկել նոյեմբերի 3-ի նիստում (տե՛ս «Երիտասարդ և սկսնակ գրողների ռեսպուբլիկական խորհրդակցությունը» վերտառությամբ հաղորդումը «Ավանգարդ»-ի 1950 թ. նոյեմբերի 4-ի համարում):

Ահա այս խնդիրների շրջանակում է նաև խնդրո առարկա «Խորհուրդներ սկսնակ գրողին» հոդվածը (Դեմիրճյանի երկերի ժողովածուի 12-րդ հատորում այն սխալմամբ վերնագրված է «Խորհուրդներ սկսնակ գրողներին»): Հոդվածը տպագրվել է «Ավանգարդ» թերթի 1930 թվականի հունիսի 1-ի (թիվ 123), 8-ի (թիվ 129), 22-ի (թիվ 141) համարներում: Թերթի էջերում այս թեմայով կան այլ հրապարակումներ ևս (տե՛ս Ս. Տարոնցու «Սկսնակ գրողների մասին», Բզնունու «Երիտ-գրողները և ինքնագաղացման խնդիրները» հոդվածները հունվարի 14-ի, Ա. Ոսկերչյանի «Երիտասարդ պրոլետգրողների խնդիրների մասին» հոդվածը՝ ապրիլի 15-ի համարներում):

Դեմիրճյանի երկերի ժողովածուի 12-րդ հատորում տեղ են գտել եռամաս այս հոդվածի միայն առաջին (Օչերկ, պատկեր, պատմվածք) և երրորդ (Բովանդակություն, պլան, մշակում) հատվածները (տե՛ս Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 56-60): Դրանցից առաջինը զետեղված է «Ավանգարդ» թերթի հունիսի 1-ի (թիվ 123), երրորդը՝ հունիսի 22-ի (թիվ 141) համարներում: Բացակայում է «Ավանգարդ»-ի հունիսի 8-ի (թիվ 129) համարում տեղ գտած երկրորդ մասը (Լեզու և ոճ), որը վրիպել է ուսումնասիրողների տեսադաշտից:

Հոդվածի գրության ժամանակաշրջանը հատկանշվում է գրական ակտիվ և թեժ քննարկումներով, որոնք վերաբերում էին պոեզիայի զարգացման ուղիներին, գրական հերոսին, ստեղծագործական մեթոդին ու ժանրին, գրականության բովանդակությանն ու ձևին, գրական տեխնիկային և լեզվին: Միայն Չարենցի անունն ու գործը բավական են պատկերացնելու համար թե՛ գրական քննարկումների բովանդակությունն ու որակը, թե՛ գրական-ստեղծագործական առճակատումների շունչն ու թափը: Գրական այս քննարկումներն ուղեկցվում էին մի կողմից՝ պրոլետգրողների և պրոլետքննադատների (Հակոբյան, Վշտունի, Ալազան, Ն. Զարյան, Դաբաղյան, Վանանդեցի և ուրիշներ), մյուս կողմից՝ Չարենցի շուրջ համախմբված գրական ուժերի միջև (Մահարի, Արմեն, Բակունց, Սուրիսայան, Երզնկյան և ուրիշներ) սուր բախումներով: Սա, ըստ էության, անզեղ հետևորդների և գեղարվեստական ազատ մտքի տեր, «ազ-գային հատկանիշներ խտացնող» ստեղծագործողների միջև: Տարաձայնություն-

ների հիմքում նաև մարդկային խառնվածքների, անձնային որակների տարբերություններն էին:

Դեմիքճյանն այս գրապայքարում, ճիշտ է, գրական ուղեկիցների շարքում էր և որոշիչ դերակատարում չունեի դրանում, սակայն գրական հարուստ փորձառությամբ և ստեղծագործական տարբեր դիտարկումներով մասնակցում էր գրական կյանքի զարգացումներին: Այս առումով ուշագրավ է ժամանակակից պոեզիայի խնդիրների կապակցությամբ 1930-ի հունիսի 8-ին ծավալված քննարկումը (այս նույն օրն է տպագրվել նաև Դեմիքճյանի հոդվածի՝ քննության առարկա հատվածը): Այն ուղղված էր գրական սխեմատիզմի դեմ և միտված մատնանշելու պոեզիայի զարգացման նոր ու թարմ ուղիներ՝ դրանցում կարևորելով կենդանի իրականությունն ու մարդուն պատկերելու գեղարվեստական պահանջը (տե՛ս «Գրական դիրքերում», թիվ 6, էջ 31-55, Դեմիքճյանի ելույթը՝ էջ 38-40): Որպես սխեմատիզմի վառ ներկայացուցիչ առանձնացվում էր Ն. Զարյանը: Այս քննարկմանը ելույթ է ունեցել նաև Դեմիքճյանը, կարևորել գրողի ստեղծագործական անհատականությունը՝ գտնելով, որ գրողը «պետք է ցույց տա իր օրիգինալությունը, անհատական մեթոդը, իր անհատական կոլորիտը, ոճը» (տե՛ս «Գրական դիրքերում», թիվ 6, էջ 40):

1930 թվականին ծավալված գրական այս քննարկումների կիզակետում էին նաև լեզվի խնդիրները, որոնց Դեմիքճյանն անդրադարձել է տարբեր ժամանակներում և տարբեր առիթներով (տե՛ս «Լեզվի կուլտուրան թատրոնում», «Ղազարոս Աղայանի լեզուն», «Անընդհատ զարգացող հայ լեզուն», «Ժամանակակից հայ գրական լեզվի զարգացման տենդենցները», ««Մեռած հոգիների» լեզուն և ոճը» և այլն): Ուշագրավ են գրական լեզվի վերաբերյալ Դեմիքճյանի պատմաքննական վերլուծությունները, ինչպես նաև լեզվի զարգացման ուղիների վերաբերյալ նրա մոտեցումները: «Ամեն գրող,- գրում է նա «Ղազարոս Աղայանի լեզուն» հոդվածում,- իր գրական լեզվի ֆակտուրայով ներկայացնում է իր գործի երկու կողմը. մեկ որ՝ նա մասնակցում է ընդհանուր գրական լեզվին, հաստատում, ամրացնում է նրա հիմքերը, երբեմն պարզապես «կրկնում է» եղածը, և երկրորդ՝ մշակում է այդ լեզուն, մտցնելով իր սեփական տարրերը, երբեմն շատ խորը «քանդելով և շինելով»» (տե՛ս Դ. Դեմիքճյան, Երկերի ժողովածու, հ. 12, էջ 44): Դեմիքճյանի համար գրական լեզուն ազգային նկարագրի և ստեղծագործական անհատականության գեղարվեստական խտացումն է, և նրա գրականությունը լեզվական այդ համադրության արտահայտությունն է: Պատահական չէ, որ «Մեր գրական լեզվի զարգացման տենդենցները և Դ. Դեմիքճյանի լեզուն» թեմայով զեկուցման մեջ (28 հունիսի, 1934) Չարենցը հետհեղափոխական շրջանի գրական լեզվի զարգացման միտումներում կարևորում և առանձնացնում է հենց Դեմիքճյանի լեզվական կուլտուրան՝ որպես խորհրդահայ գրական լեզվի զարգացման «առաջատար հուն»՝ զերծ մի կողմից թումանյանական «սին-

թետիկ», մյուս կողմից՝ տերյանական «նիվելիրովկայի ենթարկված, ազգային ձևից կտրված» լեզվից: «...Մենք պետք է խուսափենք Հով. Թումանյանի գավառաբարբառից,- գտնում է Չարենցը,- հիմքում ունենալով իբրև լավագույն լեզվի միավոր Վահան Տերյանի գրական լեզուն, որը մենք պետք է հարստացնենք պատվաստելով այն ինքնություն, այն գունագեղ ֆորմը, որոնց լավագույն նմուշները տվել է մեզ ընկ. Դերենիկ Դեմիրճյանը» (տե՛ս Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 340): Չարենցի առաջադրած «կենտրոնաձիգ լեզու» ստեղծելու ճանապարհին Դեմիրճյանի լեզվական փորձն ամենաընդունելին էր և ուղենշայինը:

Դեմիրճյանի «Խորհուրդներ սկսնակ գրողին» հոդվածի չնկատված այս հատվածը լեզվի խնդրին վերաբերող հետաքրքիր անդրադարձ է: Եթե առաջին և երրորդ հատվածներում՝ *Օչերկ, պատկեր, պատմվածք* և *Բովանդակություն, պլան, մշակում*, հեղինակն անդրադառնում է ակնարկի, պատկերի, պատմվածքի ժանրային առանձնահատկություններին, դրանց ընդհանրություններին ու տարբերություններին, ներկայացնում գեղարվեստական խոսքի կառուցման թեմատիկ, բովանդակային, կառուցվածքային սկզբունքները, ապա այս երրորդ (Լեզու և ոճ) հատվածում հեղինակի ուշադրության կենտրոնում գրական լեզուն է՝ իր կողմից կարևորված այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են՝ պարզությունը, պատկերավորությունը, հուզականությունը: Որպես իր մոտեցումների լավագույն օրինակ («ձևական տեսակետից») առանձնացնում է հայ և ռուս հեղինակների՝ Աղայանի, Թումանյանի, Իսահակյանի, Մուրացանի, Նար-Դոսի, Տերյանի, Չարենցի, Տուրգենևի, Պուշկինի, Բունինի, Ֆադեևի գրական փորձը:

Ուշագրավ են նաև բառի և պատկերի հեղինակային ընկալումները:

Դեմիրճյանի «Խորհուրդներ սկսնակ գրողին» հոդվածի ներկայացվող այս հատվածը հետաքրքրական նյութ է թե՛ գրողի ժառանգության բաց թողած էջերը լրացնելու, թե՛ լեզվի և ոճի մասին նրա կարևոր դիտարկումներն ամբողջացնելու տեսանկյունից:

ԼԵԶՈՒ ԵՎ ՈՃ

Սկսնակ գրողը պետք է մշակի իր լեզուն և հոգ տանի ոճի գեղեցկության:

Լեզուն պետք է լինի պարզ: Մեծ գրողների լեզուն պարզ է: Շատ խրթին, մանվածապատ լեզուն տաղանդի անգործության նշան է: Պարզ կոչվում է այն լեզուն, որով հեղինակը մեզ իր մտքերը հասկացնում է առանց դժվարության, անսխալ և լրիվ: Բայց մի պայման աչքի առաջ պիտի ունենանք. այն, որ այդ լեզվով գրած նյութը մեզ ծանոթ լինի:

Լեզվի պարզությանը խանգարում են.

1. Գրաբար բառերի շատ գործածությունը, թեև նրանցից շատերը գործածական են և անհրաժեշտ, ինչպես՝ ըստ այնմ, հավելյալ, ի միջի այլոց, հայց տույժ, առդիր և այլն:

2. Օտար բառերի անտեղի գործածությունը – (ինսցենիրովկա, տրակտովկա):

3. Որևէ գավառում միայն հասկանալի բառերի գործածությունը (մսապտին):

4. Երկդիմի բառերի գործածությունը:

5. Նախադասությունների մեջ բառերի անբնական դասավորությունը, որ շփոթում է մտքերը:

Պետք է գրել ոչ միայն ուղիղ և լրիվ, այլև միանգամայն ճիշտ արտահայտել մտքերը, գործածելով միմիայն այն բառերն ու արտահայտությունները, որ հարկավոր են: Ո՛չ ավել, ո՛չ պակաս:

Այստեղ հարկ կլինի իմանալ հոմանիշ բառերի գործածությունը: Համանիշ այն բառերն են, որոնք իրենց նշանակությամբ մոտ են իրար, նման են, բայց հիմնական նշանակությամբ տարբեր: Օրինակ՝ քաջություն, տղամարդություն, համարձակություն:

Հոմանիշները լեզվի հարստություններն են և պետք է նրանցով շատ զբաղվել:

Գրական երկը բացի պարզ լեզվից պետք է ունենա նաև պատկերավոր ոճ:

Օրինակ՝ պատկերավոր է՝ «երբ արևը բարձրացրեց իր վահանը ոսկեդեն»՝ «սև գիշերը ձեռը գլխին պահեց նրա երկյուղին» (Ֆիրդուսի, Շահ-Նամե):

Այսինքն պարզ բառերով – «երբ արևը ծագեց՝ գիշերը անցավ»:

Պատկերավոր են հետևյալ ձևերը, «տխրության ամպը սքողեց նրա դեմքը»: «Ճակատամարտի բոցը հանգավ հետզհետե» (Տոլստոյ): «Այն ժամանակ տասներկու թվի մրրիկը դեռ քնած էր» (այսինքն պատերազմը.- Պուշկին):

Լեզուն պետք է լինի նաև հուզական: Նա պիտի այնպիսի ձևով, այնպիսի կենդանի, բնական, անկեղծ ու զգացմունքով ասվի, որ մեզ հուզի՝ ծիծաղացնի, տխրեցնի, հիացնի, զայրացնի, շարժի մեր արհամարհանքը, հարգանքը, տարակուսանքը, ոգևորի մեզ և այլն:

Այսպիսով պարզ լեզուն գրվածքի՝ ասենք կանոնավոր, բայց լուրջ ու սառն դեմքն է. Պատկերավոր լեզուն այդ դեմքի ժպիտն է: Հուզական լեզուն նրա շունչն է, կյանքը, ոգին: Պատկերավոր լեզուն գեղեցկացնում է գրվածքը:

Սակայն պարզ լեզու չի նշանակում անպաճույճ, գոեհիկ, կոպիտ լեզու: Իսկ ավելորդ, անտեղի համեմատություններով էլ չի պատկերավորվի այդ լեզուն: Ինչպես և չզգացած, չապրած բաների մասին չի կարելի գրել հուզական լեզվով: Չկա գեղեցիկ և տգեղ բան ըստ էության: Ճղճղալ,

ճարձատյուն, ծղրտոց, դողանջ բառերը տգեղ չեն և վեհափառ, հոյակապ, դայլայլ, վսեմ բառերը՝ գեղեցիկ: Տգեղ է անտեղի գործածությունը և գեղեցիկ՝ տեղինը: Ձիու թամբը դահլիճում տգեղ է, ինչպես և ամբիոնն ախոռում: Բայց իրենց տեղերում նրանք գեղեցիկ են: Իմացիր, թե որ բառն է միայն արտահայտում քո իսկական միտքը և պատկերը, գտիր այդ բառը և նա կլինի գեղեցիկ: Ճարձատյուն, ճոռոմ լեզուն չի հուզի ոչ ոքի, անգամ հակառակ զգացմունք կառաջացնի:

Խորհուրդ կտայինք (իհարկե ձևական տեսակետից) իբրև պարզ լեզվի ու պատկերավոր ոճի օրինակ, կարդալ ի միջի այլոց՝ Ղազարոս Աղայանի հեքիաթները, Հով. Թումանյանի արձակները, Մուրացանի և Նար-Դոսի վեպերը: Իբրև պատկերավոր ոճի օրինակներ – Հով. Թումանյանի պոեմները, Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարին», Տերյան, Չարենց: Ռուսերենից Տուրգենև, Պուշկին, Բունին, Ֆադեև և այլն:

Գրականության ցանկ

Գրքեր

1. *Դեմիրճյան Դ.*, Երկերի ժողովածու, հ. 12, Ե., 1985:
2. *Դեմիրճյան Դ.*, Երկերի ժողովածու, հ. 13, Ե., 1983:
3. *Չարենց Եղիշե*, Մեր գրական լեզվի զարգացման տենդենցները և Դ. Դեմիրճյանի լեզուն, Երկերի ժողովածու, հ. 6, Ե., 1967, էջ: *Մամուլ*
4. *Բզնունի Ա.*, Երիտ-գրողները և ինքնազարգացման խնդիրները, «Ավանգարդ», Երևան, 1930, թիվ 10, 14 հունվարի:
5. *Դեմիրճյան Դ.*, Խորհուրդներ սկսնակ գրողին, (Օչերկ, պատկեր, պատմվածք), «Ավանգարդ», Երևան, 1930, թիվ 123, 1 հունիսի:
6. *Դեմիրճյան Դ.*, Խորհուրդներ սկսնակ գրողին, (Լեզու և ոճ), «Ավանգարդ», Երևան, 1930, թիվ 129, 8 հունիսի:
7. *Դեմիրճյան Դ.*, Խորհուրդներ սկսնակ գրողին, (Բովանդակություն, պլան, մշակում), «Ավանգարդ», Երևան, 1930, թիվ 141, 22 հունիսի:
8. *Դեմիրճյան Դ.*, Երիտասարդ և սկսնակ արձակագիրների ստեղծագործությունը, «Ավանգարդ», Երևան, 1950, թիվ 125, 4 նոյեմբերի:
9. Դիսկուսիա մեր արդի պոեզիայի շուրջը, «Գրական դիրքերում», Երևան, 1930, թիվ 6, հունիս, էջ 31-55:
10. *Ոսկերչյան Ա.*, Երիտասարդ պրոլետգրողների խնդիրների մասին, «Ավանգարդ», Երևան, 1930, թիվ 85, 15 ապրիլի:
11. *Տարնոցի Ս.*, Սկսնակ գրողների մասին, «Ավանգարդ», Ե., 1930, թիվ 10, 14 հունվարի:

References

Books

1. **Charents** Yeghishe, Mer grakan lezvi zargacman tendencnery ev D. Demirchyan lezun/ Development tendencies of our literary language and D. Demirchyan's language, Yerkeri zhoghovatsu/ Collection of works, Volum 6, Yerevan, AS hrat., 1967, 803 p.
2. **Demirchyan D.**, Yerkeri zhoghovatsu/Collection of works, Volum 12, Yerevan, AS hrat., 1985, 431 p.
3. **Demirchyan D.**, Yerkeri zhoghovatsu/ Collection of works, Volum 13, Yerevan, AS hrat., 1983, 391 p. Press
4. **Bznumi A.**, Yeritgroghnery ev inknazargacman xndirnery/The beginner writers and problems of self-development, Avangard, Yerevan, 1930, issue 10, January 14.

5. **Demirchyan D.**, Xhorurdner sksnak groghin/ Advice to the Beginner Writer, (Essay, image, story), Avangard, Yerevan, 1930, issue 123, June 1.
6. **Demirchyan D.**, Xhorurdner sksnak groghin/ Advice to the Beginner Writer, (Language and Style), Avangard, Yerevan, 1930, issue 129, June 8.
7. **Demirchyan D.**, Xorhurdner sksnak groghin/ Advice to the Beginner Writer, (Content, plan, development), Avangard, Yerevan, 1930, issue 141, June 22.
8. **Demirchyan D.**, Yeritasard ev sksnak arcakagirneri stexcagorcutuny/ The Creative Works of young and beginner prosaists, Avangard, Yerevan, 1950, issue 125, November 4.
9. Diskusia mer ardi poeziayi shurjy/Discussion about our modern poetry, Grakan dirkerum, Yerevan, 1930, issue 6, June, pp. 31-55.
10. **Tarontsi S.**, Sksnak groghneri masin/About beginner writers, Avangard, Yerevan, 1930, issue 10, January 14.
11. **Voskerchyan A.**, Yeritasard proletgroghneri xndirneri masin/ About problems of beginner writers, Avangard, Yerevan, 1930, issue 85, April 15.

***Ռուզաննա Արիստակեսյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, գիտական հետաքրքրությունները՝ 20-րդ դարի հայ գրականություն, սփյուռքահայ գրականություն, բնագրագիտություն: Հեղինակ է 2 գրքի («Պարույր Սևակ. գեղագիտություն և բանավեպ», «Գրական վավերագրեր (1920-1930-ական թվականներ)», հ. 1), 60-ից ավել հոդվածների:*

ORCID ID 0000-0002-2748-0249
aristakesyanr@yahoo.com

Ruzanna Aristakesyan – Doctor of Philology, Institute of Literature after M. Abeghyan NAS RA, scientific interests: history of Armenian literature of the 20th century, Armenian literature of Diaspora, textology. Author of 2 books and more than 60 scientific articles.

ORCID ID 0000-0002-2748-0249
aristakesyanr@yahoo.com

Рузанна Аристакесян – доктор филологических наук, Институт литературы имени М. Абегяна НАН РА, научные интересы: история армянской литературы XX века, армянская литература диаспоры, текстология. Автор 2-х книг и более 60-ти статей.

ORCID ID 0000-0002-2748-0249
aristakesyanr@yahoo.com

Հնդունվել է տպագրության 30.11.2023թ.: